



## 46. ԱԴԱՀ ՀԱՐՈՒՍԱԸ

**ՄԵ** քասիր մե կոտ ցորեն վե կալեց, որ տանի ջաղաց՝ աղա:  
Տիսավ մե հարուստ մարթ ջաղաշին դանն ա պըմ: Ինքն էլ աղաց:

Հարուստը մտածեց, որ էդ քասըրի ալրիցը կլոճ թխենք: Ասեց  
քասըրին:— Ա՛յ տղա, արի կլոճ թխենք:

Քասիրը ասեց:— Ա՛րի թխենք:

Հարուստը մտածում էր, որ ըմմեն քասըրի ալրիցը թխեն:—  
Ա՛յ տղա, — ասեց քասըրին, — բեր մե պահման անենք. ես ջրկաց-  
նեմ, դու պնդացրու:

Քասիրը համաձայնվավ:

Հարուստը բերեց մի բուռ ալուր քցեց մե մենծ տաշտի մեջ, էր-  
կու վեղրո ջուր լցրեց վրեն, խառնեց և քասըրին ասավ, — Դե' բեր  
պնդացրու:

Խեղճ քասիրը ինչքան որ ալուր էր աղացե, հըմմեն լցրեց էդ  
շրի մեշը, անջաղ որ պնդվավ:

Է՛հ, բերին թխին: էփավ, կլոճները հանին:

Հարուստը մտածեց. «Ո՞նց անեմ, որ էս կլոճները ես մեննակ  
ուտեմ»: Քասըրին ասեց.— Ա՛յ տղա, արի սութ ասենք, ով սութ  
շատ ասի, կլոճները ընդրան մնան:

Քասիրը օժարվավ: Ասավ:— Վո՞վ առաջ ասի:

Հարուստն ասավ:— Ես կասեմ:

Ու ըսկսեց:— Մի օր ես դդմի կոճ իմ առե, լցիր իմ շերս, որ  
բերիմ տիմ էրեխեքին: Մեկը շերիցս ընկեր էր մեր կալը: Էդ կոճը

կանաչեր էր: Թարցրացավ էտի, թաղ քշեց, էդ թաղը գնաց Արզա-  
քանա սարերով ընցավ, գնաց Ալագազա քամակով ընցավ, գնաց  
Արարատի դոշովը պատավ, Արազի վրայով ընցավ Արազայան,  
Էլավ մե մենծ կարմունճ, հըմեն մարթիքը, սել, դավա, անցնըմ  
ին վրովը:

Հարուստի սութը վերշացավ, ըսկսեց քասիրը:— Մեզի մե հատ  
հավ ունինք. էդ հավը կորավ մարտի մեկից մինչի հօքոստոսի  
վերը: էդ հավին շատ ման էկանք, զգթանք: Մենք էլ ցորեն ծեծե-  
ցինք, դարման կոլոներ ինք կալը: Ես գնացի մեր մարաքը, ոռ  
թամուզացնեմ, էդ դարմանը լցնենք մարաքը: Դուռը ջխտի, ջխտի՝  
չի բացվրմ, գնացի փանջարեն բանդեցի, ներս մտա տեսնեմ, ո՞ր  
հավը էնքան ա ածե, քառասուն գաղանոց մարաքը լիթը լցվեր ա.  
և հավն էլ էկել դունը դեմ առել, սատկել ա: Մարաքից էլամ, քա-  
ռեշտը<sup>1</sup> վե կալիմ, մտամ մարաքը, էդ ձվերը բոլորը թափիմ կալը,  
քառեշտով աշանիմ<sup>2</sup>, արիմ մե մենծ կալ, բերիմ կամերը լծիմ,  
տվիմ վրեն ու քշիմ: Տեծիմ, հավաքիմ, կոլոնիմ, աղոթրանի քա-  
մին էլավ, էրանիմ՝ աքլոր, վառեկ իրարից ջոկիմ: Մնաց քողաքը<sup>3</sup>:  
Քողաքն էլ ծեծիմ, մե հատ լոլախ դազ էլավ: Հետո էդ դազը կորավ,  
շատ ման էկամ շղթամ: Գնացիմ թուղթ իշկալ տվիմ, թուղթարա-  
ցը ասեց. «Դնա մե հատ քառասուն գաղանոց խոր փորի, մե հատ  
ասեղ տնկի մելը, էլ կայնի ասեղի զիխին, որտեղ ըլլի բո դազը,  
կերեաւ: Ես էլ կացի բտենց արի. ասեղը տնկի, կայնամ ասեղի  
զիխին, տեսնամ դազը Հնդու-Ցաման կամ են լծ ու քշըմ են: Ասե-  
դի զլովսը մե հատ մենծ փիլաքան դրեր իմ, էդոնք իշամ ու դուզ  
գնացիմ Հնդու-Ցաման: Ղաղին անգաճից պինդ բոնիմ, ասիմ՝ էս  
իմ դազն ա: Գործը ընկավ դատարան: Ղազը հասցրին ընձի և դազի  
աշխատանքը մե կոտ կորեկ կտրեցին, էդ կորեկը տվին ընձի: Բա  
էդ մե կոտ կորեկը ընչո՞վ տանիմ: Մտածի, մտածի, մե հատ ֆուր-  
դուն բերիմ, բարցեցիմ էդ ֆուրդունին, ժանրութունից ֆուրդունի  
ակները կոտրան: Ի՞նչ որ բերեցի, բարցի՝ դաթը, ձի, դավա, գոմեշ,  
ոչ մեկը շկարացան տեղից իրար տա: Մեկ էլ տեսամ մե մարթ էն  
յանից էկավ, ասեց ընձի. «Տո՛ անմիտք, ի՞նչ ես անըմ, մե հատ  
որց լու դթի մորթի, ընդրա տիկը հան, հըլը մե բան էլ կորեկ առ,

1 Հոսկի, (ծանոր. քանահավամի):

2 Փոելը, (ծանոր. քանահավամի):

3 Մնացորդ, խզուզ, ժանծ, (ծանոր. քանահավամի):

լի՛ց լվի տկի մեշը, բերանը կապի, քի՛ց դազի վրեն, դու էլ հեծի,  
գնա. էլ ընչի՞ ես մացե շիվար: Ես էլ ըտենց արիմ: Գնացիմ, գնա-  
ցիմ մե հատ լավ որց լու գթամ, բերիմ մորթիմ, լազաթին դրա տի-  
կը հանիմ, միսը քցիմ գեն, կորեկը լցիմ տկի մեշը, հըլը կես մասը  
դարդակ մնաց:

Էտ վախտը հարուտը քասըրի թևը բռնեց, ասավ.— Հերիք ա-  
ես գիտեմ, դու հըլը շատ գլխիցդ դուս կտաս, վե կալ կլոճները, գնա-  
քասիրը վե կալավ կլոճները, տարավ տուն:

